

կատարարէն ետքը, ուր պարսկական ոյժը պարտութիւն կրեց, Մեհրուբան կ'արժանանայ այսպիսի բախտի. «Բայց ամբարշտին Մեհրուբանայ վերաւորեալ ձին՝ ոչ կարաց երազել ընդ փախտեսայսն. որում ամապարեալ հասանէ սպարապետն Հայոց Սմբատ, եւ զորս ընդ նմայն էին կոտորեալ՝ ձերբակալ առնէ զվատուէրն յեղեր շամբին Կոզայովտի: Եւ զմտաւ ամեալ, թէ զուցէ թափիցէ զնա մեծն Ներսէս, այնորիկ աղագաւ ոչ ամէ ի բանակն. այլ զանդեօքն գտանէ պատրաստական առ ի կորուստ ամբարշտին զոմանս խորանաւորս հուր լուցեալ, եւ շամփուր երկաթի՝ միս խորովելոյ. զոր ջեռուցեալ, կրկնեաց բոլորեալ որպէս պսակ, եւ յոյժ արտաշէկ արարեալ, ասէ. «Պատկեմ զքեզ, Մեհրուբան, քանզի ի խնդիր էիր թագաւորել Հայոց. եւ ինձ ասպետիս պարտ է զքեզ պսակել ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց»: Եւ մինչդեռ տաքն էր իրբեւ զհուր՝ եղ ի գլուխն Մեհրուբանայ, եւ այնպէս սատակեցաւ շարն: Եւ յայնմհետէ խաղաղեցաւ երկիրն, ընդ ձեռամբ Պապայ նուաճեալ» (Գ. 37):

Ի դէմս Արծրունուոյս ուրուագծուած է Համագասպ եւ Սահակ արծրունիներու կրքուսեր եղբոր՝ Մեհրուբանի պատկերը, որ 786ին ուրացած էր քրիստոնէութիւնն եւ քիչ յետոյ սպանուած: Կը պատմէ Ղեւոնդ (163), թէ Մեհրուբան ահաբեկած մահուան երկիրէն եւ չլացած ոստիկանին խոստումներէն «խորտակէր զքաղցր լուծ հաւատոյն որ ի Քրիստոս. եւ որոշէր ի հօտէն տեսնն եւ զգեմայր զկերպարան գայլոյ»: Կ'աւելցնէ այս խօսքերու վրայ վկայագիրը. «յանձն առնոյր... զօրէնսդրութիւնն նոցա արագապէս թրիատել... եւ ելեալ իշխանական ճոխութեամբ (կամէր) զալ մտանել յաշխարհն Վասպուրական, տիրել փոխանակ եղբարց իւրոց: Չայս լուեալ Դաւիթ Մամիկոնեան փութացաւ վազվազակի ընդ առաջ նորապատահեաց նմա եւ Եհատ գրուի նորա եւ երարձ զնախատինս նորա ի տանէս Արծրունեաց» (Վկայարանութիւն, Սոփերք Հայկականք. ԺԲ. 67—68): Այս տեղոյն մենք յետոյ նորէն պիտի անդրադառնանք. եւ պիտի տեսնենք, որ Մամիկոնեանը Բագրատունի մըն է, Սահակ Բագրատունուոյն եղբայրը, որուն յանձնուած էր ի բացակայու-

թեան Արծրունի եղբայրներուն՝ Վասպուրականի իշխանութիւնը, ինամակալի տիրադատով, որովհետեւ Դաւիթ եղբայրն էր Վասպուրականի տիրուհուոյն: Բագրատունի մը ստրաշէկ շամփուրը բոլորած կը պսակէ ուրացեալ Մեհրուբանի գլուխը՝ թագադիր ասպետութեան տիրադատով, Բագրատունի մը զարձեալ սուր շողացուցած կը կտրէ ուրացեալ Մեհրուբանի մը գլուխը, ինամակալի տիրադատով: Վկայագրի համաձայն զէպքը պատահած է Վասպուրականի սահմաններէն դուրս: Խորենացին կ'երեւայ թէ ճիշտ տեղն կ'ակնարկէ երբ կը զրէ. «յեղեր շամբին Կոզայովտին»: Կոզովտը Բագրատունեաց հոգարածինն էր եւ անկէ կ'անցնէր ճանապարհը Դունէն զէպի Վասպուրական:

Մեհրուբանի սպանութեամբ Վասպուրականը կ'ենթարկուէր Բագրատունիներուն, թէեւ ինամակալութեան տիրադատով: Արիւնտ ձեռքը կը լուացուի մեկնութեամբ թէ «երարձ զնախատինս ի տանէս Արծրունեաց»: Ղեւոնդ ունէր յոյս, թէ Մեհրուբան կը փոխէր պայլի կերպարանքը. նաեւ Մովսէս վստահ էր թէ Ներսէս մը կարող էր մտքի փոփոխութիւն յառաջ բերել ուրացեալին մէջ. բայց Բագրատունի իշխանները սիրած են դործել արագ եւ ներկայացնել իրողութիւնը fait accompli:

Չեմ կասկածիր թէ Մովսէս ծանօթ էր 785ի զէպքերուն. եւ Մեհրուբանի ուրացութիւնն եւ սպանութիւնը ուղած է նա խորհրդաւոր կերպով նշել իւր Պատմութեան մէջ յանձինն նոյնանուն Արծրունուոյ: Փաւստոս, որ հոս գլխաւոր առաջնորդն եղած է Խորենացուոյ, չի գիտեր Մեհրուբանի սպանման այս մանրամասնութիւնները. անոնք Մովսէս Խորենացուոյ հարազատ ստեղծագործութիւններն են:

(Շարունակելու) Է. Ն. ԱՅՈՒՆԻՍ



ՀՆԶՈՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՂ, ԻԷ:

Ահաւասիկ երեք հայերէն բառեր. բարբ'րար¹, կի'արար, գգրա'ր: Վերջին երկուսը դաւաճական բառեր են եւ չկան Առձեռն բառգրքի մէջ: Կի'արար նշանակում է մէկի հետ ընկերովի տուն վարձող կամ վարձու ցանք անող. իսկ գգրա'ր նշանակում է վարձով բուրդ ու բամբակ գող: Երեք բառերն եւս կարծուած են «արար» բաղադրիչով եւ վերականգնելի են իբր բարի-արար, կիս-արար եւ գգ-արար (հմմ. կէս-կիսեւ, գգեւ): Չուղագրենք այս բառերն ու իրենց շեշտական տարազները.

բարի-ա'րար — յ — բարբ'րար
 կի'ս-արար — շ — կի'ս(ա)րար
 գգ-արա'ր — յ — գգ(ա)րա'ր:

Մենք տեսնում ենք, որ «բարբ'րար» բառի մէջ ի եւ ա ձայներն իրար ձուլուելով տուած են Ե: Միեւնոյն ա ձայնը, շեշտից առաջ կամ յետոյ գալով՝ միւս երկու բառերի մէջ պարզապէս սղած եւ կորած է:

Մանր քննութեան արդեւք «բարբ'րար» բառի պարագան: Այն նախադրական հայ մարդը, որ առաջին անգամ բարբեց բարի եւ արար բառերը, անշուշտ հնչում էր բարիա'րար կամ բարիարա'ր: Դառնալով հանրութեան սեփականութիւն եւ երկար ժամանակ ու հազարաւոր բերաններ մէջ հնչուելով, այդ բառի իս խումբը սկսեց արտաբերուիլ իբր Ե: Այդ բառի մէջ ի-ն չքացած չէ, այլապէս բառը պիտի առաւելր բարբարա. եւ ոչ «արար» բառը պիտի ջին ա-ն է չքացած, այլապէս բառը պիտի հնչէր բարիարա. երկու ձայները «բի'րա-հնչէր» ձուլուած են իրար եւ տուած են մի պէս՝ ձուլուած են իրար չէ բաղադրի տար-նոր արդիւնք, որ նման չէ բաղադրի տար-րերից եւ ոչ մէկին: Ե-ը ի չէ եւ ոչ ա, այլ նրանց ձոյլ արտաբերութիւնն է:

Ինչո՞ւ համար իս խումբը տուած է Ե: Եթէ ուշադիր դիտենք, կը տեսնենք, որ ի արտաբերելու համար անհրաժեշտ է ատամ-նաշարերի ամենից նեղ բացուածքը, իսկ ա արտաբերելու համար՝ ամենից լայն բացուածքը²: Այսպիսով իս խումբն արտաբերելու համար պէտք է ամենանեղ բացուածքից անընդմիջաբար անցնել ամենալայն բացուածքին: Եթէ այդ խումբն արտաբերենք ընդհատաբար, այսինքն նախ ի եւ բերենք ընդհատաբար, այսինքն նախ ի եւ սպա՛ ա, մենք կարող ենք դիւրութեամբ անցնել ատամնաշարերի ամենանեղ բաց-

¹ Բառը բերած եմ արեւելեան շեշտադրութեամբ: Մանուկ հասակիս լսած եմ եւ մի տեսակ «կոչական» շեշտադրութիւն. մեր թողի քահանան (Թիֆլիս) պատարազի ծանօթ խօսքն արտաբերում էր. «Բա'րբար Աստուած, աղաչե'մք»:
² Նկատել, որ խօսքը վերաբերում է ատամնաշարերի բացուածքին եւ ոչ շարժման:

ցուածքից ամենալայնին եւ որոշապէս արտաբերել ի — ա: Սա կը լինի մի դիտաւորեալ արտաբերութիւն եւ թէ՛ ի-ն թէ՛ ա-ը որոշ չափով շեշտուած կը լինեն: Բայց եթէ անփութօրէն եւ անընդհատաբար արտաբերենք այդ խումբը, մենք կը նկատենք, որ ի-ի պատճառով լիակատար ա արտաբերել ի-ն պատճառով լիակատար ա արտաբերում ենք ամենանեղ բացուածքից անբանում: Միւս կողմից անցուածքին, միջօրէն անցնելու ամենալայն բացուածքին, մի ուստի մեր արտաբերած ա-ը ստանում է մի ուստի մեր արտաբերած է a ձայնի արտաբերուելանք, որ յիշեցնում է a ձայնի արտաբերութիւնը պարսկ. آ բառի մէջ. ուրիշ խօսքի մեր լիարեքան ա-ը արտաբերում է թոյլ մեր լիարեքան ա-ն իր հերթին շեղբերան: Միւս կողմից ա-ն իր հերթին աղղում է ի-ի արտաբերութեան վրայ եւ աղղում է ի-ի արտաբերում: Արտաբերական նրան դարձնում է կիսաձայն: Արտաբերական նրան մըրցումի մէջ յաղթանակում է ա-ը եւ այս մըրցումի մէջ, դառնալով մի յովտ —y, սուտում է ի-ն, դառնալով մի կերպարանորով ստանում ենք ձայների մի կերպարանորով ստանում ենք ձայնի մի մեր Ե-ն է: նախորդ խմբակցութիւն —yā, որ մեր Ե-ն է: Արտաբերական այս երկուցի կարող ենք Արտաբերական այս խումբի միասնականութիւն ասելով թէ իս խումբի միասնական արտաբերութեան ժամանակ ի-ն դառնում է յովտ —y, իսկ ա-ը հնչում է զանազան նրանց ձոյլ արտաբերութիւնը շեղ. իսկ նրանց ձոյլ արտաբերութեան տահնչում է իբր Ե: Այս փոփոխութեան տարազն է.

իա > ե. կամ՝ ia > yā > ye:

Նկատելով «բարբ'րար» բառի շեշտը, մենք կարող ենք մեր մշակած տարազին տալ մի նոր գուպահեւ.

իա' > ե'. կամ՝ ia' > yā' > ye':

Այսինքն՝ իս խումբը թէ՛ այն զէպքում երբ ա-ը շեշտ ունի եւ թէ՛ այն զէպքում երբ շեշտ չունի՝ ձոյլ արտաբերումով տա-

լիս է շեշտաւոր կամ անշեշտ Ե: Քննելով «բարբ'րար» բառի պարագան մի ուրիշ տեսակէտից, մենք կարող ենք տեսնել, որ Ե-ն այդ բառի մէջ նախնական չէ. ասել, որ Ե-ն այդ բառի մէջ ժամանակ Ե եղած չէ. որ այդ բառի մէջ վաղեմի իս է, որ յետաոր այդ Ե-ը մի վաղեմի իս է, որ յետաոր այն ձոյլ արտաբերութեան շնորհիւ հնչում է իբր Ե: Այդ ձոյլ արտաբերութիւնն է, որ հասած է մինչեւ Ս. Մեսրոպի օրերը: Այդ նոր ձայնը, որ ինչպէս տեսանք, իրօք մի ձուլուածք է, Ս. Մեսրոպի ականջը մի ձուլուածք է, Ե. եւ է ձայնից, ուստի տարբերած է ա, ի եւ է ձայնից, որ Ե տեղից կարող ենք հետեւեցնել նաեւ, որ Ե տեղից կարող ենք հետեւեցնել նաեւ, որ Ե զրի ye արտաբերութիւնն է, որ շատ բարեւէ հին արտաբերութիւնն է, որ շատ բարեւէ հին պահած են բառի սկզբում միայն, բառերը պահած են բառի սկզբում միայն, իսկ մի քանիսը նաեւ բառի մէջ: Կան տեղեր ուր «մեր» բառն արտաբերում են զեր ուր «մեր» բառն արտաբերում են myer եւ մինչեւ իսկ mijer³: Ե-ի լերկա-

³ Մակար Ա կաթողիկոսը արտաբերում էր. Հայր միեր...

ները. բայց երբ ա-ն ինքը դառնում է ան-
 շեշտ, որ նոյն է թէ անդոր, այն ժամանակ
 նա ձգում է -ն եւ պահում է y-ը. միա-
 ժամանակ զրկուելով իր յենարանից եւ վան-
 կարածան պատնէշից, այլ եւս դժուարա-
 նում է ա-ի լիարերան հնչումը եւ նա դառ-
 նում է շեղբերան, որով ստացւում է yā
 խումբը, որ ինչպէս տեսանք հնչում է իր
 ye — Ե: Այս երեւոյթը կարելի է բանաձեւել
 ստեղծով թէ երկար ի-ն կարճանում է, երբ
 հետեւորդ ա-ը կորցնում է իր շեշտը: Մենք
 այսպիսով գալիս ենք նոյն տեղը. այսինքն
 եւս խումբը դառնում է Ե, բաղադրել ի-ի
 կարճացման հետեւանքով: Այսպիսով տեսա-
 կանօրէն միեւնոյն է՝ ասել Ե-ը «բարե-
 բար» բառի մէջ մի նախաւոր իա է, թէ
 ասել Ե-ը «բարեբար» բառի մէջ մի նա-
 խաւոր եա է, որ ծագում է մի հին իա
 խմբից, ուր ի-ն երկար էր: Միջնորդարար
 թէ անընդմիջբար, բայց «բարեբար» եւ
 նման բառերի մէջ Ե-ը մի հին երկարբառ
 է, որ երբեմն իբր ուրոյն ձայն զոյութիւն
 չունէր. նա մի կարճ ի-ի եւ կարճ ա-ի ձոյ
 արտաբերութեան արդիւնք է, կամ ծագում
 է մի նախաւոր եա խմբից, ուր ի-ն երկար
 էր եւ ժամանակի ընթացքին կարճացաւ:
 Գալով եա խմբին՝ նրա համար կարող ենք
 ասել, որ նա գալիս է մի հին իյա խմբից,
 ուր յ-ն կամ երկար ի-ի մի թեւն է՝ ձգուած
 դէպի հետեւորդ ա-ը, կամ մի հին բաղա-
 ձայնի փոխարինութիւն է, ընկած կարճ ա-ի
 եւ կարճ ի-ի միջեւ:

Հիմա մենք կարող ենք Ե-ի հարցը դնել
 իր բովանդակ ծաւարով: Մենք տեսանք, որ
 «բարեբար» բառի մէջ Ե-ը մի հին իա է:
 Իսկ ի՞նչ է նա ուրիշ կարգի բառերի մէջ:
 Մենք տեսանք, որ «բարեբար» բառը իր
 նախնական վիճակում բնաւ Ե ունեցած չէ:
 Իսկ միւս Ե ունեցող բառերը նախազրական
 հեռաւոր օրերին ունեցած են Ե: Ուրիշ
 խօսքով՝ Ե-ը մի նախաձայն է, թէ պատ-
 մական հոլովոյթի արդիւնք է, ինչպէս «բա-
 բար» բառի մէջ: Այս խնդրի լուծումը
 նշանակութիւն ունի ոչ միայն մեր, այլ եւ
 բոլոր քոյր լեզուների համար:

Մանենք այս միջին հարցի քննութեան
 բաղիղների մէջ: Մենք ունինք քեկն եւ
 քիկն բառերը, որ նոյն բանն են նշանակում
 եւ նոյն բառերն են: Երկուսն եւս նոյն կազ-
 մութիւնն ունին. մի բայց եւ մի ծածուկ
 վանկ — քե-կն, քի-կն: Բայց ինչո՞ւ մէկն
 ունի Ե իսկ միւսն՝ ի: Մենք տեսանք, որ
 «բարեբար» բառի մէջ Ե-ը մի նախաւոր իա
 է: Ենթադրում եմ, որ այս բառի մէջ եւս
 Ե-ը մի հին իա է. վերականգնելով ա-ի նա-
 խաւոր արժէքը, եւ կր ստանամ քիակն, որ
 շատ ծանօթ բառ է: Մենք ունինք քեկուէ,

որ բացառական հոլով է եւ նշանակում է
 «թեւից»: Սա իր կազմութեամբ նման է
 գանձուէ բացառական ձեւին. հետեւապէս
 եւ կարող եմ վերականգնել նրա ուղղականն
 ու սեռականը իբր *քեկ — *քեկու — եւ
 բացառ. քեկուէ. հմմ. գանձ, գանձու,
 գանձուէ: Ստացանք այսպիսով մի նոր բա-
 ռաձեւ — *քեկ, որ քեկն բառին յարաբե-
 րում է այնպէս, ինչպէս հարս բառը հարսն
 բառին: Այս բառի մէջ եւս Ե-ին իր նախաւոր
 ենթադրած արժէքը տալով, եւ վերականգ-
 նում եմ նրա հին ձեւը՝ քիակ, որ նոյնպէս
 շատ ծանօթ բառ է: Մեր տեսութեամբ ծա-
 ծուկ վանկերի մէջ սղած են վաղեմի ձայնա-
 ւորներ: Թեկն բառի կն վանկի մէջ կարծում
 եմ սղած է մի ա. հետեւապէս այդ բառը եւ
 վերականգնում եմ իբր *քեկ-ան, որ նոյն է
 թէ՛ *քի-ակ-ան: Այս վերականգնած ձեւի
 մէջ ան ածանցը կարծում եմ նոյն արժէքն
 ունի, ինչ որ նոյն ածանցը իշ-ան, ձի-ան եւ
 նման բառերի մէջ եւ ուրեմն *քիակ-ան
 նշանակում է քիակներ: Թիակ ստում են
 ուսի թիակաձեւ ոսկորին: Այս բառն իր
 հերթին արոհել կարելի է իբր քի-ակ, ուր
 գտնում ենք մեր շատ ծանօթ քի բառը: Հա-
 ւանական է, որ մետաղների զիւտից առաջ,
 երբ մարդ չէր կարող տախտակ կտրել ու-
 տաշել, նրա քին այդ ոսկորն էր: Մենք տե-
 սանք, որ քեկուէ բացառականը նշանակում
 է «թեւից», հետեւապէս քեկ եւ քեւ նոյն-
 իմաստ են: Թեւ բառի Ե ձայնին եւս իր վա-
 ղեմի արժէքը տալով՝ եւ վերականգնում եմ
 նրա հին կերպարանքը իբր քի-ա: Հիմա
 հասկանալի է թէ ինչու քեկ եւ քեւ նոյն
 արժէքն ունին. երկուսն եւս նոյն բաղադրիչ
 բառից են կազմուած, որ է քի. հմմ. քի-
 ա > քեւ, քի-ակ > քեկ: Թիակ նշանա-
 կում է նաեւ նաւակ վարելու քին (հմմ.
 քեւ, քեւակ): Մտածումի այն ընթացքը,
 որով քի, քիակ, քեկ, քեկն, քեւ կարճած
 են մերձիմաստ, երեւում է նաեւ մեր լե-
 զուական ընտանիքի մէջ. հին սլաւերէն
 ramo նշանակում է «ուս», հին գերմ. rama
 նշանակում է նաւակի քիակ: Ռուսերէն
 lopátka նշանակում է ե՛ւ փոքր թիակ ե՛ւ
 թիակոսկր: Այս զուգահեռները ցոյց են տա-
 լիս, որ քեկ, քեկն, քիկն միեւնոյն բառերն
 են, բայց ինչո՞ւ տարբեր ձեւեր ունին:
 Ինչո՞ւ պէտք է քիակն դառնար քեկն, կամ
 քիակ բառը երեւար քեկ կերպարանքով:
 Ինչո՞ւ քիակ բառի մէջ իա խումբը մնացած
 է իա, իսկ քեկ բառի մէջ ձուլուած ու-
 հնչում է Ե: Ահաւասիկ մի շարք հարցում-
 ներ, որ պէտք է բանաւոր լուծում ստա-
 նան, եթէ իրօք Ե-ը մի ձոյլ իա է այդ բա-
 ռերի մէջ: Վերջապէս ի՞նչ ծագում ունի
 քիկն բառի ի-ն եւ ինչո՞ւ քի՛րսն սեռական
 դառնում է քրտա՛ն, իսկ քի՛կն դառնում է
 ոչ թէ քկա՛ն, այլ քիկա՛ն: Միթէ միեւնոյն
 ի-ն չէ՞ երկու բառի մէջ եւս, ինչո՞ւ մի

տեղ նա սղում է, իսկ միւս տեղը մնում է
 անվթար:

Մեր վերականգնած *քիակն նախա-
 ձեւը միաժամանակ ե՛ւ ուղղական էր ե՛ւ
 սեռական. իմաստի տարբերութիւնը ստեղ-
 ծում էր շեշտառութեան տարբերութեամբ,
 այսպէս՝

թիա՛կան > թե՛կան > թե՛կն. ուղղական
 թիա՛կան > *թե՛կան. սեռական

բայց մենք չունինք *քեկան ձեւով սեռական,
 այլ ունինք քիկա՛ն, քիկա՛ւք, քիկա՛նց եւ
 այլն: Ես կարծում եմ, որ քիկան սեռականը
 ո՛չ թէ քեկն բառինն է, այլ քիկն բառինը:
 Ինչպէս ունինք. հի՛մն — հիմա՛ն. այնպէս
 եւ ունինք. քի՛կն — քիկա՛ն: Գրաբար լե-
 զուն աւանդած է երկու ուղղական ձեւ քեկն
 եւ քիկն, բայց պահած է երկուսից մէկի
 թեւումը միայն. քեկն ձեւի սեռականը մնա-
 ցած է «թեկն ի թեկին» բացատրութեան
 մէջ, որ նշանակում է ուսերը շարժել,
 կոտրուել: Նա ընթացած է անձն — անձին
 հոլովական կարգով: Նրա սեռականը կարող
 էր լինել նաեւ *քեկան: Ինչպէս ունինք
 գառն — գառին, բայց եւ գառան (Շունը
 «գառն էր մի գառան մորթի»: Յ. Թումա-
 նեան): Այնպէս կարող էր օրինակէս կազ-
 մուել քեկն — *քեկան մի սեռական, զու-
 գահեռ քեկին աւանդուած ձեւին:

Մենք տեսանք, որ քեկուէ բառաձեւը
 ենթադրում է մի քեկ եզակի ուղղական,
 իսկ քեկն բառաձեւը մի ածանցաւոր կազ-
 մութիւն է իբր *քե՛կ-ան > քե՛կն: Նշանա-
 կում է այս բառի ամենապարզ ձեւն է քեկ,
 որ ինչպէս տեսանք կարելի է լուծել իբր
 քիակ: Արդ այս ձեւի մէջ, որ պահած է մեր
 լեզուն նաեւ անվթար, իբր հանդիպում են
 «բարեբար» բառի քննութեան ժամանակ
 մենք տեսանք, որ երբ իա խմբի շեշտն ընկ-
 նում է ա-ի վրայ, նրա ձոյլ արտաբերու-
 ձեւ է ա-ի վրայ, որ պահած է մեր
 թիւնը տալիս է Ե. հմմ. բարե՛կամ >
 բարե՛կամ (արեւելեան շեշտադրութիւն):
 Գալով միւս դէպքին՝ եւս ստում է ի-ի վրայ,
 իա խմբի մէջ շեշտն ընկնում է յ, այն ժամանակ
 ա-ը սղում ու դառնում է յ, որ ձուլուելով ի-ին
 իբր նոյնեղութիւնը: Սա
 երկարացնում է ի-ի տեւողութիւնը: Եւ այդ է
 մի ստացական երկարութիւն է: Եւ այդ է
 պատճառը, որ քիկն բառի ի-ն չի սղում
 հոլովման ընթացքին (հմմ. քի՛կն — քիկան
 եւ ոչ քկա՛ն): Հետեւորդ ձայնի անկման
 պատճառով նախորդ ձայնաւորի երկարումը
 սովորական երեւոյթ է քոյր լեզուների մէջ:
 Այսպէս օրինակ. լատ. nīdus, որ երկար ի
 ունի, ծագում է մի նախաւոր *nizdo ձեւից,
 որ կարճ ի ունի. լատ. pono, որ երկար օ
 ունի, ծագում է մի հին *po-s(i)no ձեւից,

որ կարճ օ ունի⁷: Այսպէս նաեւ սանսկրիտ
 լեզուում sīda ձեւը, որ սահմ. ներկայ Ժա-
 մանակի բունն է եւ երկար ու շեշտուած ի
 ունի, sad (նստել) պարզ արմատի կրկնա-
 ւոր ձեւն է: Sīda ծագում է մի նախաւոր
 *sizda ձեւից, որ ինչպէս տեսնում էք կարճ
 ի ունի, իսկ սա մի աւելի հին *si-sad-a
 ձեւից, որ sad արմատի կրկնաւորն է եւ
 նոյնպէս կարճ ի ունի⁸:

Այս հիման վրայ մենք կարող ենք կազ-
 մել մի նոր տարազ. ի՛ա > ի՛յ > ի՛ —
 իա > իյ > ի: Նկատի ունենալով այս ձայնա-
 կազմութեան վերջնական արդիւնքը, մենք
 երկարութեան նշան չենք դնում վերջին ի-ի
 վրայ, քանի որ մեր լեզուում դեռ դասական
 չըջանին երկար ձայնաւորներն արդէն չքա-
 յած էին:

Առնենք հիմա մեր վերականգնած նա-
 խաւոր ձեւը *քիակն: Այս բառի մէջ
 ինչպէս տեսանք, ինչպէս տեսանք,
 դառնում իա խումբը, ինչպէս տեսանք,
 կարող էր երկու տեսակ շեշտառութիւն ու-
 կարող էր երկու վրայ, կամ ա-ի վրայ: Չու-
 նենալ. կամ ի-ի վրայ, կամ ա-ի վրայ: Չու-
 դաղբենք երկու տեսակ շեշտառութիւնները
 եւ տեսնենք նրանց օրինական հետեւանք-
 ները.

թիա՛կան > թե՛կան > թե՛կն.
 թի՛ական > թի՛ական > թի՛կան > թի՛կն.

Ահաւասիկ բուն աղբիւրն ու պատճառը
 է/ի, e/ի ձայնաշարժութեան, որ լեզուագէտ-
 ներն արձանագրում են իբր պարզ փաստա-
 կան դրութիւն, առանց մեկնութեան: Եւ
 ուրիշ կերպ անել չեն կարող, քանի որ Ե-ը
 Ե-ն համարում են պարզ հնչիւն եւ մինչեւ
 իսկ նախնական հնչիւն, մինչդեռ նա մի հին
 իսկ նախնական հնչիւն, որ շատ լեզուների մէջ լե-
 երկարբառ է, որ շատ լեզուների մէջ լե-
 կացած է, այսինքն մերկացած է իր բաղա-
 դիր յովտից, ինչպէս մեր մի քանի բարբառ-
 ներում. հմմ. երես > էրես: (Սլաւ լեզուն
 ներում. հմմ. esi — (դու)ես. որ
 պահած է յովտը. հմմ. esi — (դու)ես. որ
 հնչում է yesi եւ ոչ էսի:)

Այս տեսութեամբ միեւնոյն բառերի
 բարբառական տարբեր արտաբերումները
 վերածւում են շեշտական տարբեր տա-
 ռազների կերպակութեան: Թիֆլիսցիւն ստում
 լազների կերպակութեան: Թիֆլիսցիւն ստում
 է. «մից», Երեւանցիւն «մեց». սա մի նախա-
 ւոր *միազ է, որ շեշտուելով իբր ւ օ միազ,
 դառնում է մի՛յզ > մի՛զ, իսկ շեշտուելով
 դառնում է մի՛յզ > մի՛զ, իսկ շեշտուելով
 դառնում է մի՛յզ > մի՛զ, իսկ շեշտուելով
 դառնում է «տերեւ», մի ուրիշը
 բարբառ ստում է «տերեւ», մի ուրիշը
 «տիրեւ». մէկը՝ «թեթեւ», միւսը՝ «թիթեւ»
 եւ այլն:

Բայց ի՞նչպէս մեկնել այն երեւոյթը, որ
 մենք գրում ենք. «միակ, թիակ, ձիան,
 միախին»: Ինչո՞ւ սրանք չեն դարձած «մեկ,
 միախին»:

⁷ Ska A. Meillet et J. Vendryes, Traité de
 gramm. comp. des langues classiques, էջ 84—85:
⁸ Ska Ф. Кнауеръ, Грамм. санскритск. язы-
 ка, էջ 51, § 121:



